



## ԶԼՄ-ների ազատության հարցերով ԵԱՀԿ Ներկայացուցիչ

Հարավկովկասյան 13-րդ մեդիա համաժողով

*Լրատվամիջոցների և խոսքի ազատության բազմակողմ մարտահրավերները*

Հուլիսի 6-7, 2016 թ., Թբիլիսի, Վրաստան

### ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆՆԵՐ

Սույն փաստաթղթում ամփոփված են ԶԼՄ-ների ազատության հարցերով ԵԱՀԿ Ներկայացուցչի գրասենյակի կողմից 2016 թ. հուլիսի 6-7-ը Թբիլիսիում կազմակերպված՝ Հարավկովկասյան 13-րդ ամենամյա մեդիա համաժողովի ընթացքում Հայաստանի, Ադրբեջանի և Վրաստանի լրագրողների, պետական և քաղաքացիական հասարակությունների ներկայացուցիչների, ինչպես նաև Բոսնիա Հերցեգովինայի, Ռուսաստանի Դաշնության և Միացյալ Թագավորության ավելի քան 80 միջազգային փորձագետների և մասնակիցների առաջարկությունները:

Համաժողովի ուշադրության առանցքում տարածաշրջանում ազատ լրատվամիջոցների և արտահայտման ազատության հետ կապված մարտահրավերներն էին և բազմակարծության ու լրատվամիջոցների ազատության բարելավման համար ԵԱՀԿ-ում կիրառվող լավագույն գործելակարգերը՝ նոր տեխնոլոգիաների, կարգավորման, հակամարտությունների և համանման համատեքստում:

Համաժողովի մասնակիցները համաձայնեցին, որ.

1. Ներկայումս լրագրողության առջև ծառայած են բազմաթիվ տնտեսական մարտահրավերներ՝ կապված այն անձանց ընդլայնված շրջանակի հետ, ովքեր, անկախ սահմաններից, լրատվամիջոցներն օգտագործում են բոլոր տեսակի տեղեկություններ և գաղափարներ որոնելու, ստանալու և հաղորդելու համար, որի արդյունքում առաջանում են լրատվամիջոցների և հաղորդումների նոր ձևաչափեր: Այնուամենայնիվ, մարտահրավերներն իրականում նոր հնարավորություններ են տեղեկատվության ազատության ու խոսքի ազատության համար, որոնք լրագրողները՝ կանայք և տղամարդիկ, կարող են օգտագործել ի շահ հանրության և իրենց մասնագիտության:

2. Բոնությունը և անպատժելիությունը շարունակում են խնդիր հանդիսանալ Հարավային Կովկասում, հետևաբար, հարկ է ուշադրություն դարձնել ԵԱՀԿ տարածաշրջանի այլ

երկրներում անպատճելիության վերացման ջանքերին: Կառավարությունները պետք է դատապարտեն լրագրողների և մամուլի այլ աշխատողների նկատմամբ բոլոր հարձակումները և ոտնձգությունները և պատասխանատվության ենթարկեն նման արարքներ կատարող իրավախախտներին՝ անցկացնելով այդ միջադեպերի արագ, արդյունավետ և անկախ հետաքննություն:

3. Առանձնահատուկ մտահոգության առարկա է կին լրագրողների և բլոգերներին ուղղված առցանց վիրավորանքները, որոնք զգալիորեն նպաստում են թշնամական միջավայրի ձևավորմանը լրագրողության նոր ձևաչափերի նկատմամբ, որոնք հայտնի են նաև որպես քաղաքացիական լրագրողություն: Հանրությունը պետք է տեղյակ լինի այս խնդրի մասին, և կառավարությունները և լրագրողների մասնագիտական միությունները պետք է ընդունեն այդ խնդիրը և անդրադառնան դրան:

4. Խոսքի քրեականացումը զգալի խոչընդոտ է, որը արգելակում է քաղաքական ու հետաքննող հարցերով լրագրությունը և որը պետք է վերացնել այնտեղ, որտեղ դեռևս այն գոյություն ունի: Լրատվական համայնքը և միջազգային կազմակերպությունները պետք է գործադրեն բոլոր անհրաժեշտ ջանքերը դրա համար:

5. Մտահոգության էական պատճառ է հանդիսանում լրատվամիջոցների հարաճուն օգտագործումը պատերազմ և ահաբեկչություն, ինչպես նաև ազգային, ռասայական, էթնիկ կամ կրոնական ատելություն քարոզելու համար, ինչը հանդիսանում է խտրականության, թշնամության կամ բռնության հրահրում: Անհրաժեշտ է միանշանակորեն պայքարել այս երևույթների դեմ: Կառավարությունները պետք է հատկացնեն միջոցներ ահաբեկչության և ատելության քարոզչության տարածումը լրատվամիջոցների հետագա օգտագործման միջոցով դադարեցնելու և կանխարգելելու համար, ինչը պետք է ընդգրկի նման քարոզով զբաղվող լրատվամիջոցների ֆինանսավորման սահմանափակումը:

6. Արևելյան գործընկերության շրջանակում լրատվամիջոցների ինքնակարգավորման կազմակերպությունների գործող Ցանցի ամրապնդման շարունակական ջանքերը պետք է նույնպես օգտագործվեն պատերազմի և ատելության քարոզչության դեմ պայքարելու համար, իսկ լրատվամիջոցների ազգային խորհուրդներին պետք է տրամադրել աջակցություն և ազատություն՝ արդյունավետ ու պատասխանատու ձևով աշխատելու համար:

7. Անհրաժեշտ է էլ ավելի խթանել մեդիա գրագիտությունը՝ լրատվամիջոցներում ավելացող ապատեղեկատվության և քարոզչության դեմ պայքարելու համար:

8. Միևնույն ժամանակ, կառավարությունները չպետք է օգտագործեն ազգային անվտանգության և ահաբեկչության դեմ պայքարը՝ որպես խոսքի ազատության իրավունքի սահմանափակման հիմնավորում:

9. Հակամարտության ժամանակ խիստ կարևոր դերակատարում ունեն անկախ դատական համակարգն ու մեդիա ոլորտը կարգավորող մարմինները: Դրանց անկախությունը, հետևաբար, պետք է երաշխավորվի և հարգվի պետական և լրատվական բոլոր դերակատարների կողմից՝ քաղաքական ու տնտեսական անհարկի միջամտությունից խուսափելու համար:

10. Լրատվամիջոցները պետք է օգտագործեն լավագույն բիզնես մոդելները և գործելակարգերը, քանի որ դրանք վերաբերում են հանրության համար թվային ոլորտի կայունության և արժևորման բարելավմանը: Այս նոր մոդելներում պետք է ընդգրկել նոր հնարավորություններ լրատվամիջոցների՝ որպես դիտորդներ հանդես գալու համար:

11. Կառավարությունները պետք է ապահովեն լրատվամիջոցների բազմակարծությունը, հասկապես նախընտրական ժամանակաշրջաններում:

12. Առկա է օրենսդրությունը և քաղաքականությունը վերանայելու և, անհրաժեշտության դեպքում, լրամշակելու կարիք՝ ապահովելու համար, որ խոսքի ազատության ցանկացած սահմանափակում սահմանված է օրենքով, ըստ ԵԱՀԿ և միջազգային այլ չափորոշիչների և համապատասխանում է անհրաժեշտության և համաչափության հստակ չափանիշներին:

13. ՋԼՄ-ների ազատության հարցերով ԵԱՀԿ Ներկայացուցչի գրասենյակը պետք է աջակցի մասնակից պետություններին՝ համապատասխան քաղաքականությունները և կարգավորումները իրականացնելիս՝ Հարավային Կովկասում խոսքի ազատությունը և լրատվամիջոցների ազատությունը, ինչպես նաև լրատվամիջոցների բազմակարծությունը ամրապնդելու նպատակով: